



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Թ. ՏԱՐԻ ԹԻՄ 2, Յունուար 2026



ԾԱԳՈՒՄԸ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԵԳԱԿԻ

Տօն Ա. Ծննդեան:

Տօն Ա. Աստուածայայտնութեան:

Տօն մը՝ ուր կարելի չէ չլսել աշխարհի բոլոր կողմերէն եկող զօղանջները, որոնք միայն ու միայն կը հնչեն մեծագոյն

աւետիսը. «Այսօր Դաւիթի քաղաքին մէջ ծնաւ ձեր Փրկիչը՝ Օծեալ Տէրը» (Ղկ 2.11):

Այս բառերու մէջ կը կարդանք Աստուծոյ փրկագործութեան հրաշալի ծրագիրը: «Այսօր»-ը կը յիշեցնէ, որ Աստուծոյ մարդեղացումը ճշմարտութիւն է: Քրիստոս այսօր ալ կը կանչէ մեզի՝ ապրելու Իր լոյսով եւ Իր կամքին համաձայն:

Բեթղեհէմի՝ «հացի տուն» կոչուող քաղաքին մէջ, ծնաւ Աստուածորդին՝ Կենդանի Հացը, որ երկինքէն իջաւ մարդը հոգեւոր սովէն ազատագրելու համար: Սուրբ Կոյս Մարիամէն ծնունդ առնելով՝ Ան միացուց Աստուածութիւնը եւ մարդկութիւնը ու բացաւ Նոր Կեանքի ճանապարհը:

Այո՛, Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, որպէսզի Իր լոյսով ընդմիշտ հեռացնէ մեզի խաւարը, խաղաղութիւնը հաստատէ մարդոց սրտերուն մէջ եւ հաշտեցնէ Աստուծոյ հետ: Ինդպէս հրեշտակները այս մեծ եւ սքանչելի խորհուրդը աւետեցին. «Փառք Աստուծոյ բարձունքներուն մէջ, խաղաղութիւն երկրի վրայ եւ հաշտութիւն մարդոց միջեւ»:

Սուրբ Ծնունդը Արդարութեան Արեգակի ծագումն է, լոյս մը, որ կը լուսաւորէ բոլորիս կեանքը եւ մեր դիմաց կը բանայ ճշմարտութեան ճանապարհը:

Այս սուրբ տօնին առիթով մեծագոյն եւ հրաշալի ու բարի լուրը լսենք.

Այսօր Տօն է Ա. Ծննդեան, աւետիս...

Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, յայտնուեցաւ մարդոց, աւետիս:

Այսօր Արդարութեան Արեգակը ծագեցաւ, աւետիս...:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԻ...» (Շարական)

Գիշերուան խաւարին մէջ էր, երբ մեծ ու սքանչելի խորհուրդը՝ Քրիստոսի ծնունդը յայտնուեցաւ հովիւներուն, որոնք իրենց ոչխարներուն պահպանութիւնը կ'ընէին: Ծննդեան աւետիսն է, որ տրուեցաւ համայն մարդկութեան. «Այսօր Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է» (Ղկ 2.11):

Սուրբ Ծնունդը անցեալի պատմական դէպք մը չէ, ո՛չ ալ միայն ամէն տարի կրկնուող գեղեցիկ ամանդութիւն: Ան Աստուծոյ սիրոյն խորհրդանիշն է. սէր մը, որ ընտրեց խոնարհութիւնը՝ իշխանութեան փոխարէն, լուսինը՝ աղմուկի փոխարէն, եւ մտորը՝ գահի փոխարէն: Բեթղեհէմի նորածին Յիսուսին մէջ երկինքն ու երկիրը կը հանդիպին, յաւիտենականը կը մտնէ ժամանակի մէջ, եւ աստուածային լոյսը կը ծագի մարդկային խաւարին մէջ:

Այո, լոյսը ծագեցաւ, ճշմարտութիւնը տրուեցաւ բայց մարդիկ չկրցան հասկնալ զայն: Աշխարհը տակաւին կը տառապի անորոշութենէ, պատերազմներէ, վախերէ եւ հոգեւոր տուայտանքներէ: Սակայն Քրիստոս մեր կողքին է, Աստուած մեզի հետ է, Աստուած հաւատարիմ է Իր տուած խոստումներուն: Սուրբ Ծնունդը մեզի կը սորվեցնէ, որ Աստուած աշխարհը հեռուէն չի փրկեր: Ան կը մտնէ մեր պատմութեան մէջ, մեր ցաւին, մեր տկարութեան մէջ: Կը սրբագործէ մարդկային մեր կեանքը, կը յուսադրէ վշտացած հոգիները, կ'ուղղէ մոլորածին քայլերը եւ կը մխիթարէ սրտաբեկները:

Աստուած մեր կողքին է՝ մեզի հետ է: Քաջալերուինք եւ հաստատուն քայլերով յառաջ երթանք: Բացուող տարին բարի է եւ յոյսերով լեցուն: Փորձենք մեր ապրելակերպով բարի պահել եւ Տիրոջ ճանապարհով ընթանալ: Ամէն բան անցողիկ է կեանքի մէջ, մնայունը Քրիստոս ինքն է:

Թող այս նոր տարին ըլլայ հոգեւոր նորոգութեան շրջան մը: Թող Քրիստոսի լոյսը լուսաւորէ մեր ճամբաները, զօրացնէ մեր հաւատքը եւ առաջնորդէ մեր քայլերը դէպի խաղաղութիւն, արդարութիւն եւ սրբութիւն:

Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան բարեբաստիկ տօներուն առիթով, աղօթենք, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքն ու խաղաղութիւնը հաստատուի ամէն սրտի եւ ամէն օճախի մէջ:

**ՔՐԻՍՏՈՍ ՏՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ.
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ:**

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Տէրը պատրաստ էսրտաբեկները օգնելու, փրկելու յուսալքուած հոգիները» (Սաղմոս 34:18):

“The Lord is near to the brokenhearted and saves those who are crushed in spirit.” (Psalms 34:18)





ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾՇՄԱՐԻՑ ԴԻՄԱԳԻԾԸ

Այսօր ես Հայ Եկեղեցին հայրենիքին թե՛ Սփիուքի մէջ կը գտնուի իր պատմական առաքել- լուծանան նոյն ուղիին մէջ, ծառայութեան իր մայր հունին մէջ: Ուր կայ ափ մը հայութիւն՝ հոն է ան, որպէս կեդրոնական գործօն ուժ, ազգային միութեան ամուր խարիսխ, որպէս տէր ու պահապան աշխարհացրիւ իր զաւակներուն: Չկայ իրաւ հայութիւն առանց Հայ Եկեղեցոյ ու չկայ Հայ Եկեղեցի առանց հայութեան. անոնք իրարմով են մի ու անբաժան որպէս ամբողջական ծոյլ միասնութիւն:

Տառապանք, ջարդ ու արքայ տեսած ու իր հայրենի դարաւոր հողերէն պոկուած հայ ժողովուրդի Հոգիին մէջ երբեք չէ մտած իր Եկեղեցոյ սրբազան առաքելութեան հանդէպ ունեցած իր խոր հաւատքն ու յոյսը: Ունի ու առաւել պայծառ գիտակցութեամբ այն խոր համոզումը թէ ան է եղած ու տակաւին ան է, իր զանգակով, խաչով ու Աւետարանով իր հաւատքի խորանը ու մշակոյթի տաճարը, իր գոյութեան հիմքերը կոանող հրաշագործ դարբնոցը, իր ազգային իտէլաներուն ներշնչարանը, եւ զինք խաղաղութեան ու արդարութեան նաահանգիստը առաջնորդող աստուածավառ փարոսը:

Արդ, Հայ Եկեղեցին մեր համահայկական մայր էջին վրայ կեդրոնական դիրք ու դերակատարութիւն ունեցող հաստատութիւն մըն է եւ պէտք է ըլլայ: Չէ՛ կարելի զայն մեր կեանքի լուսանցքին վրայ թողուլ ու մեր անցեալի ժառանգութեանց ասանդարանին մէջ փակել: Հայ Եկեղեցին հնութիւն բուրոջ հաստատութիւն մըն չէ, ներկայի մէջ անցեալ մըն չէ ու չի կրնար ըլլայ: Անոնք որոնք այսպէս կը նկատեն Հայ Եկեղեցին, անոնք զուրկ են մեր պատմութեան համապարփակ գիտակցութենէն, չունին իրողութիւններն ու երեւոյթները խորաբախանց ակնարկով դիտելու, վերբերելու ու արժեւորելու հիմնական կարողութիւնը: Հայ Եկեղեցին գանձարանն է մեր ազգային հոգեմտաւոր արժէքներուն, բայց երբեք թանգարանը մեր կեանքին:

Թող դադրին այլեւս Հայ Եկեղեցոյ ոգիին բոլորովին խորթ ու անյարիր եւ յաճախ միտքի ու գիտակցութեան լոյսէն դատարկ խօսքերը, թե՛ Հայ Եկեղեցին ասանդապահ է, անցեալ է, փակ է աշխարհին, ժամանակավրէյ հնացեալ հաստատութիւն մըն է եւ նմանօրինակ բազմատեսակ ու խրթնաձայն աղմուկներ, որոնք խտոր կը համեմատին ճշմարտութեան ու իրողութեան:

Այո՛, Հայ Եկեղեցին ասանդապահ է, բայց մինչեւ հոն ուր ասանդութիւնը իր ոգիին ու կառոյցին էական մասը կը կազմէ եւ իր առաքելութեան ու ներկայ դարու կեանքին հետ հաշտ է: Հայ Եկեղեցին ասանդապահ է եւ պիտի մնայ, բայց երբեք՝ ասանդամոլ: Ներկայ ըլլալով հանդերձ անցեալ է Հայ Եկեղեցին, երբ անցեալը իրեն կեանք է ներկայի մէջ նոր պայծառութեամբ ճառագայթող, ներկայով ոգեղինուող: Չէ՛ կարելի Հայ Եկեղեցին իր անցեալէն կտրել, որովհետեւ «ճառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն»: Ու անելին չէ՛ կարելի իր առաքելութիւնը ամփոփել մեր կեանքի հոգեւոր շրջագծէն ներս միայն, որովհետեւ ան ընդհանրական հայութեան ազգային կառոյցին վրայ բարձրացած ու մեր դարաւոր կեանքի փորձառութեանց մէջէն աճած ու հայացած աստուածահիմն հաստատութիւն մըն է՝ Քրիստոնէական Եկեղեցոյ այս տոկուն ու դալար մէկ ճիւղը: Ու տակաւին չէ՛ կարելի զայն փակել արդի աշխարհի պահանջներուն ու տագնապներուն դիմաց, որովհետեւ Հայ Եկեղեցին ո՛րք քարեղէն հաստատութիւն է, ո՛րք ձէս է, ո՛րք դաւանանք, ո՛րք նուիրապետութիւն, այս բոլորը արտայայտութեան որպէս ձեւ ու եղանակ ունենալով հանդերձ, ան ամէն բանէ վեր ԿԵԱՆՔ է, ՈԳԻ է, ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ է: Եւ հետեւաբար, Հայ Եկեղեցին, մնալով հանդերձ իր առաքելութեան մայր հունին մէջ, ներկայ է ու պէտք է ըլլայ եւ յառաջապահ դիրքի վրայ մեր կեանքի բոլոր մարզերէն ներս - հայապահպանում, Հայկական Դատ, մշակոյթի տարածում, ընկերային ծառայութիւն եւ այլն: Համաշխարհային բեմերուն վրայ Հայ Եկեղեցին է որ լսելի կը դարձնէ ու պիտի շարունակէ դարձնել հայ ժողովուրդի ծայնը ու արդար պահանջքը:

Լայն է բացած Հայ Եկեղեցին իր դռները մարդկային կեանքին նոր յոյսեր ու ըմբռնումներ ներարկող ու զայն նոր կարելիութիւններով հարստացնող տեղական ու միջազգային բոլոր դրական շարժումներուն դիմաց: Ան ո՛րք միայն հայ կեանքի մայր հունին մէջն է, այլ նաեւ միջ-եկեղեցական կեանքի հոսանքին մէջ, ոչ սոսկ դիտողի հանգամանքով, այլ գործողի դերով, առանց սակայն կորսնցնելու իր անձնայատուկ նկարագիրն ու ազգային դիմագիծը: Ու տեսնել մեր Եկեղեցոյ արդի գոյութեան պատկերին մէջ հնացեալ հաստատութիւն մը, լոկ պահապանը մեր անցեալի իմացական ու հոգեկան ժառանգութեանց, ու այսպէս Հայ Եկեղեցին որպէս թանգարան, զոց ու անտարբեր արդի հայ եւ միջազգային շարժումներուն, պիտի ըլլար ինչ դառն մեղադրանք, ինչ անարդար կեցուածք ու թեթեւ մօտեցում:

Հանեցէ՛ք աստուածաշէն ու հայադրոշմ այս հաստատութիւնը հայ կեանքէն, ու հայ կեանքը կը թառամի, կը բեկանի, ինչպէս եղաւ ան, երբ զաւակները ազգի օտար ու մութ ուժերէ դրդուած ուզեցին «նախնի ուղղափառութեան» վերադարձնել զայն, կամ «տգիտութիւն ու խաւարամտութիւն» վերագրելով մաքառեցան իրենց Մայրենի Եկեղեցոյ դէմ ու հեռացան անկէ, որ լոյս ու կեանք էր պարգեւած իրենց դարեր շարունակ, որ յանուն քրիստոնէութեան, յանուն ուղղափառ դաւանութեան պայքարած էր ու արին թափած...:

*
* *

Հայ Եկեղեցին անցեալին մեր իմացական ու հոգեկան արժէքներուն ու մեր գոյութեան ամրակառոյց բերողը եղաւ: Այսօր ես, ան է մեր համահայկական կեանքին կեդրոնական բարձր բերողը, մեր հաւատքի ամրոցը, մեր յոյսի խորանը, մեր լոյսի տաճարը, մեր ազգային կամքին դարբնոցը, որուն շուրջ հաւաքուած ժողովուրդը «մթին ամբոխի» կամ «խոնարհամիտ հօտի» չի նմանիր, այլ իր պատմութեան առողջ գիտակցութեամբ լեցուն, եւ իր պայծառ ապագայի յոյսով առջուն, քրիստոնէական ու հայկական բարձր արժէքներով սնանող, հայութեամբ իր կեանքը բեղմնաւորող առողջ ու գիտակից հայութիւն մըն է, որ կը պայքարի ու կը ստեղծագործէ ու կը քալէ յառաջ իր պապերու լոյս հաւատքով, իր դարաւոր պատմութեան ուղիներով:

(Վերջ)

ԱՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԷՇԻՇԵԱՆ
ԱՅԺՄ՝
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՔՐԻՍՏՈՍԻ ՍԵՐԸ

Յիսուս քեզ կը սիրէ, որովհետեւ դուն իր սիրագեղ սրտին ծնունդն ես: Ան քեզ կը սիրէ, որովհետեւ իր սիրով ու իր սիրոյն մէջ ապրելու համար ստեղծած ու փրկած է քեզ:

Աշխարհի համար դուն լոկ անձ մըն ես, բայց Քրիստոսի համար դուն ամբողջ աշխարհի մըն ես, ըսած է իմաստուն մը:

Քրիստոսի մեծութիւնն ու զօրութիւնը չի կայանար Աստուծոյ Բարձրեալ Որդին ըլլալու իր հանգամանքին մէջ, այլ՝ իր մարդասիրութեան մէջ:

Գամը չէր որ Յիսուսը խաչին վրայ պահեց, այլ՝ մեզի հանդէպ իր ունեցած սէրը:

Տիրոջ սէրը մեզի հանդէպ, պայմանաւորուած չէ մեր սիրովը իրեն հանդէպ:

Յիսուսի սիրոյն հպումը զգացող մարդը՝ չի կրնար փուլ չգալ անոր սիրոյն դիմաց:

Յիսուս լոկ պատգամող մըն չէր սիրոյ մասին, այլ՝ սիրոյ պատգամն իսկ էր. այո՛, ան երկինքին սիրոյ պատգամն էր՝ ուղղուած երկրին ու երկրաւորներուն:

Քրիստոս կը սիրէ մեզ, ո՛րք թէ որովհետեւ արժէք ենք, այլ՝ որպէսզի արժէք դառնանք: Մեզի հանդէպ իր սէրն է որ մեզ արժէքի կը վերածէ մեր երկնաւոր Հօր ու անոր հրեշտակներուն համար:

Չկայ մէկը որ մեզ սիրէ Յիսուսէն անելի, որովհետեւ մեծագոյն եւ իսկական սէրը՝ ուրիշին համար զոհաբերուող սէրն է, եւ Յիսուս մեզի համար կատարեց այդ զոհաբերութիւնը: Ինքն իսկ ըսաւ. «Մեծագոյն սէրը այն սէրն է, որով մարդ ինքզինք կը զոհէ իր բարեկամներուն համար» (Յովհաննէս 15.13):

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ
Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան

ՉԱՐԵՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Հզօր Թագաւոր, Քրիստոս, մեր Աստուածը, ապաւին՝ քեզի ծարաւ եղողներուն եւ փրկիչ՝ նեղութեան մէջ եղողներուն: Դուն, որ անօրէններուն կողմէ չարչարուեցար մեզի համար, ցոյց տուր քու զօրութիւնդ եւ եկուր փրկէ զիս, որ քու արինովդ գնեցիր: Թոյլ մի՛ տար որ Սատանան գերէ զիս, քու փրկածդ. մի՛ թողուր, որ Չարը իրեն բնակարան դարձնէ զիս, քու սուրբ անունովդ կնքուած տաճարս. մի՛ ձգեր որ Թշնամին կոխկոտէ ու ծաղրէ զիս, քու Մարմնիդ մէկ անդամը. այլ՝ քու արարչական սիրովդ գթա՛ ինձի, քու արարածիդ: Տէր, ողորմէ՛ մեզի, որ քու խաչդ դարձուցինք մեր միակ պարծանքը. թող քու խաչդ պահէ մեզ տեսանելի եւ անտեսանելի Թշնամիէն:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ

Տէր, երես մի՛ դարձներ ինձմէ. Բարերար Տէր, կաղաչեմ, ինձի օգնական եղիր: Տէր, զիս մի՛ անտեսեր եւ մի՛ լքեր զիս, ո՛րք իմ փրկիչ Աստուածս:





**ԳՀԱՍԿԼԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ
ՃԱՇՈՒ ԺԱՄ, ԿԱՍ ԵՐԱԽԱՅԻՑ ՊԱՏԱՐԱԳ**

ՃԱՇՈՒ ՊԱՏԱՐԱԳԻ ՓԱԿՈՒՄ

«Հաատամբ»-ն ետք դարձեալ Սարկաազը ժողովուրդին ուղղուած երկար յորդոր մը ունի, գեղեցիկ բովանդակութեամբ. «Մանաւանդ հաատաբով աղաչենք եւ խնդրենք, որ մեր Տէրը, մեր Աստուածն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս այս պաշտամունքը եւ աղօթքները ընդունելութեան արժանի համարէ: Աղաչենք որ Տէրը լսէ մեր ծայնը, ընդունի մեր սրտաբոլս խնդրանքները, ներէ մեր յանցանքները եւ ողորմի մեզի...» եպն.:

Դժբախտաբար հոս եւս դպրապետներ ու դպիրներ անմիտ կերպով կ'ընդհատեն մաղթանքը, եւ առանց թոյլ տալու որ խնդրանքը ամբողջանայ կամ յաջորդ տունները ըստին՝ «Կեցո Տէր, Շնորհեա Տէր»ներու անիմաստ շարք մը կ'երգեն, խօսքն ու միտքը լռեցնելով եւ միայն եղանակին կարեւորութիւն տալով:

Ճաշու կամ Երախայից Պատարագի այս մասը կը փակուի պատարագիչին «Իսաղաղութեամբ քով, Քրիստոս փրկիչ մեր» ծայնատր աղօթքով, որ կ'աւարտի օրհնութեամբ՝ «Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեան» [=Տէր Աստուած օրհնէ բոլորիդ]:

Երկու իրողութիւններ կը յատկանշեն Ճաշու կամ Երախայից Պատարագի այս բաժնին ասարտը:

Նախ, պատարագիչը այս հանգրուանին կը հնէ իր թագը եւ հղաթափները, իսկ եթէ եպիսկոպոս է՝ նաեւ պանակէն, Եմիփորոնը եւ մատանին: Այլ խօսքով, կը մերկանայ իր բոլոր գարդերէն, մէկդի կը դնէ ամէն շքեղանք, որոնք յատուկ են իր պաշտօնին եւ անոր բարձրութեան, եւ կը պատրաստուի սուրբ Ընծաներուն ընդմէջէն Տէրը՝ Յիսուս Քրիստոսը դիմաւորելու համեստ ծառայի մը պէս:

Երկրորդ, Սարկաազը իր խօսքը ուղղելով բոլոր «ակունք, անհաւատ, անապաշխար կամ անմաքուր» մարդոց, կը հրահանգէ որ եկեղեցիէն դուրս ելլեն, «չմօտենան աստուածային այս խորհուրդին» («Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից, եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեցցի յաստուածային խորհուրդս»):

Այս հրահանգը այսօր ոչինչ կ'ըսէ մեզի, եւ ո՛չ կը հասկնանք անոր իմաստը, ո՛չ ալ մէկը տեղէն կը շարժի: Մինչդեռ, անցեալին այս հրահանգը հնչելուն պէս՝ անհաւատները, չմկրտուած անձերը, ապաշխարութեան մէջ եղողները եւ ուստի իրենց մեղքերէն չարբուած անձերը, որոնք մինչեւ այս հանգրուանը կրնային ներկայ ըլլալ Պատարագին (քանի ուսուցողական կամ դաստիարակութեան բաժինն էր անիկա, ինչպէս կանխաւ ըսինք), այս հանգրուանին պէտք էր դուրս գալին եկեղեցիէն. այլեւս իրենց արտօնուած չէր մասնակցիլ բուն հաւատացեալներուն սահմանուած Ս. Հաղորդութեան խորհուրդին:

Գալով «Եկեղեցիէն դուրս գալ» բացատրութեան, այդ եւս երկու կերպ կը հասկցուի: Կամ այն է, որ ամբողջութեամբ եկեղեցւոյ շէնքէն պէտք էր դուրս ելլէին, եւ կամ՝ (այն եկեղեցիներուն պարագային՝ ուր յետսակողմը գալիք կար) պէտք էր երթային գալիք («առ դրունս ելէք»), եւ հոն աղօթէին, ճշմարիտ հաւատացեալներէն անջատուած՝ եկեղեցւոյ հաղորդութեան մասնակցելու անկարող:

(Շարունակելի 7)
«ՀԱՍԿԼԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ,
ԿԱՌՈՅՑԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՌՈՐԵԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Յիսուս է ծներ Ս. Կոյս Մարիամէն,
Ուրախ են բոլոր, մեծ, պզտիկ, ամէն,
Բեթլեհէմ քաղաք կը ցնծայ այսօր,
Աշխարհ է եկեր՝ մէկ նոր թագաւոր:

Յիսուս է ծներ, Աստուծոյ որդին,
Ահա, պառկեր է վրան չոր յարդին,
Լաթի կտոր մը, իբր խանձարուր,
Օրօրոցի տեղ՝ պարզուկ մէկ մսուր:

Յիսուս է ծներ եւ աշխարհ ցնծայ.
Մոգեր են եկեր, բերեր են ընծայ,
Սիրուն նուէրներ, արքայի յարմար,
Նորածին, փոքրիկ. Յիսուսի համար:

Յիսուս է ծներ, դաշտի հովիւներ
Եկեր են, անոր առջեւ ծնրադրեր.
Մինչդեռ քնանայ ան, մշիկ,
Հրեշտակներ կ'երգեն մեղմ ձայնով, յուշիկ:
Փառք, փառք, փառք ի բարձունս:



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

ՄԱՐԻԱՄԻ ՅՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ:

Մարիամի յղութեան ատեն հոռմայեցիներուն Օգոստոս կայսրը հրամայեց, աշխարհագիր կատարուի իր իշխանութեան տակ գտնուող երկիրներուն մէջ:

ՆՉ ԸՍԵԼ Է ԱՇԽԱՐՀԱԳԻՐ:

Աշխարհագիր՝ մարդահամար ըսել է, այսինքն՝ երկրի մը մէջ որքան մարդ գտնուիլը գիրի առնել:

ՄԱՐԻԱՄ ԵՒ ՅՈՎՍԷՓ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՏԵՆ ԻՆՉ ԸՐԻՆ:

Այն ատեն անոնք Նազարէթ քաղաքէն Բեթլեհէմ եկան արձանագրուելու համար:

ԻՆՉՈ՛Ւ ԲԵԹՂԵՀԷՄ ԵԿԱՆ:

Որովիտես երկուքն ալ Դաւիթի ցեղէն ըլլալով՝ պէտք էր, որ Դաւիթի քաղաքը գային:

Ո՛ՒՐ ԲՆԱԿԵՑԱՆ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԷՋ:

Մտուի մը մէջ բնակեցան, որովիտես իջեանի տեղ չունէին:

ՀՈՆ ԻՆՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ:

Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասած ըլլալով՝ Յիսուս ծնաւ հոն, մտուրին մէջ:

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ Ո՛Ր ՕՐԸ ԵՂԱԻ:

Յիսուս ծնաւ Յունուար 6-ին, ինչպէս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մինչեւ օրս կը տօնէ:

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԻՆՉՊԷՍ ԻՄԱՅՈՒԹԵՑԱԻ:

Աստուծոյ հրեշտակը Բեթլեհէմի մօտ գտնուող հովիւներուն երեւցաւ եւ անոնց անտեղձ ըսելով. «Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է» (Ղկ 2.9):

ՈՒՐԻՇ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ԱՆ ԻԶԱ՛Ն ԵՐԿԻՆՔԷՆ:

Այդ, այդ հրեշտակին միացաւ երկնաւոր զօրքերու բազմութիւն մը, որ կ'օրհնաբանէր զԱստուած՝ ըսելով. «Բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք, խաղաղութիւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն» (Ղկ 2.14):

ԱՅՍ ԼՍԵԼՈՎ ՀՈՎԻՆԵՐԸ ԻՆՉ ԸՐԻՆ:

Հովիւները անմիջապէս Բեթլեհէմ եկան, եւ մտուրին մէջ Յիսուսը գտնելով՝ անոր երկրպագութիւն ըրին:

ՀՈՎԻՆԵՐԷՆ ԶԱՍ ՈՐԻՇՆԵՐ ԱՆ ԵԿԱ՛Ն ՅԻՍՈՒՍԸ ՏԵՄՆԵԼՈՒ:

Հովիւներէն գատ Արեւելքէն երեք մոգեր եկան, որոնք գիտուն եւ շատ հարուստ մարդիկ էին:

ԱՆՈՆՔ ԻՆՉՊԷՍ ԳԻՏՅԱՆ, ԹԷ ՅԻՍՈՒՍԸ ԾՆԵՐ Է:

Անոնք երկինքի վրայ նշանաւոր աստղ մը տեսան եւ հասկցան, որ մեծ Թագաւորը ծներ է:

ՅԻՍՈՒՍԻ ԾՆԱԾ ՏԵՂԸ ԻՆՉՊԷՍ ԳՏԱՆ:

Այս մոգերը երբ Երուսաղէմ հասան, սկսան հարցնել, թէ ո՞ր է նոր ծնած Թագաւոր. վերջապէս, աստղին հետեւելով՝ գտան տեղը, գացին, Յիսուսին երկրպագութիւն ըրին եւ ընծայ տուին՝ ոսկի, խունկ եւ զմուռ: (Այսպիսի ընծաներ նախապէս միայն թագաւորներու եւ Աստուծոյ կը նուիրէին):

ՀԵՐՈՎԴԷՍ ԹԱԳԱՌՈՐ ԼՍԵՑ ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԻՆ ԼՈՒՐԸ:

Հերովդէս լսեց ու շատ վախցաւ, եւ մոգերուն հրամայեց, որ երբ գտնեն, տեղը իրեն յայտնեն:

ԻՆՉՈ՛Ւ ԱՅՍ ՊԱՏՈՒԷՐԸ:

Ասիկա ըրաւ, որպէսզի Յիսուսը մեռցնել տար, որովիտես կը վախնար, որ Յիսուս իր տեղը թագաւորէր:

ԻՐ ԱՅՍ ԶԱՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿՐՅԱ՛Ւ ԿԱՏԱՐԵԼ:

Իր այս դիտաւորութիւնը չկրցաւ կատարել, որովիտես մոգերը ուրիշ ճամբով վերադարձան:

Ո՛Վ ՊԱՏՈՒԻՐԵՑ ԱՆՈՆՑ, ՈՐ ԱՅՂՊԷՍ ԸՆԵՆ:

Աստուծոյ հրեշտակը իրենց երագին մէջ երեւցաւ եւ այսպէս պատուիրեց:

ՀԵՐՈՎԴԷՍ ԲԱՐԿԱՅԱ՛Ւ ՄՈԳԵՐՈՒՆ ԱՅՍ ԸՐԱԾԻՆ:

Հերովդէս սաստիկ բարկացաւ եւ հրամայեց որ Բեթլեհէմի եւ անոր սահմաններուն մէջ գտնուող երկու տարեկանէն վար բոլոր մանուկները ջարդեն:

ՆՉՈ՛Ւ ՀԱՄԱՐ ԱՅՍ ԱՆԳԹՈՒԹԻՒՆԸ ԸՐԱԻ:

Որպէսզի Յիսուս ալ այդ անմեղ մանուկներուն հետ սպաննուի:

ՀԵՐՈՎԴԷՍԻ ԱՅՍ ԶԱՐ ԴԻՏԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐՈՒԹՅԱ՛Ւ:

Հերովդէսի այս չար դիտաւորութիւնը չկատարուեցաւ, որովիտես հրեշտակին հրամանով Յովսէփ Յիսուսը եւ անոր մայրը առնելով՝ գանոնք Եգիպտոս փախցուց:

ՀՈՆ ՄՆԱՅԻՆ:

Քիչ ժամանակ հոն մնացին, եւ երբ Հերովդէս մեռաւ, դարձեալ հրեշտակին խորհուրդով իրենց քաղաքը՝ Նազարէթ վերադարձան:





ՆԻԿԻՅՑ ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ

«ԳԱՆՈՑ Է ՆՈՎԻՆ ՄԱՐՄՆՈՎՆ ԵՒ ՓԱՌՈՔ ՀՕՐ,
Ի ԴԱՏԵԼ ԶԿԵՆԴԱՆԻՍ ԵՒ ԶՄԵՌԵԱԼԱ:
ՈՐՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ Ո՛Չ ԳՈՅ ՎԱՆՃԱՆ»:

1. Գալոց է - «Պիտի գայ»:

Քրիստոնեական մեր հաաստքին կարեւորագոյն երկրորդ հաստատումը, որ սպասումն է որոշակի ժամանակակէտի մը, Քրիստոսի երկրորդ գալուստին, որ պիտի ըլլայ ասարտը ներկայ ժամանակին եւ սկիզբը գալիք յափտենական կեանքին:

Երկրորդ գալուստը Նոր Կտակարանին մէջ կը յատկանշուի քանի մը կարեւոր երեւոյթներով.-

- ա) Ամբողջացումը տիեզերքի նպատակին, ներկայ կարգին, եւ սկիզբը նոր կարգին:
- բ) Փրկութիւն: Ազատագրութիւնը մեր մարմիններուն եւ ամբողջ աշխարհին (Հմմտ Հո 8.19-25):
- գ) Մեռելներու յարութիւն: (Ա. Կը 15.20-23: Ա. Թս 4.14):
- դ) Դատաստան: Մարդու Որդիին գալուստը պիտի ըլլայ փայլակի մը պէս, անսպասելի եւ շանթահարող, եւ Աստուծոյ դատաստանը պիտի բերէ չար աշխարհին վրայ, ճիշդ ինչպէս Նոյի օրերուն պատահեցաւ ջրհեղեղով (Մտ 24.27, եւ 37-39): Այն ատեն սուրբերը իրենց փառքը պիտի հագնին, իսկ չարագործները իրենց դատապարտութիւնը ստանան:
- ե) Հատուցում՝ մարդոց գործերուն համաձայն: Իւրաքանչիւրը իր մարմինով պիտի «ընդունի հատուցումը երկրի վրայ իր կատարած բարի կամ չար գործերուն» (Բ. Կը 5.10):
- զ) Նոր երկինք եւ նոր երկիր: Տիրոջ անակնկալ գալուստով աշխարհը պիտի վերափոխուի, եւ պիտի կատարուի նոր երկինքի եւ նոր երկրի խոստումը (Հմմտ Ես 65.17):

Եկեղեցին կ'ապրի սպասումովը այդ գալուստին, որ մօտալուտ է, թէպէտ անոր ժամն ու ժամանակը չենք գիտեր:

2. Նովին մարմնով:

Աստուածորդին, Աստուած Բանը, մարմնացաւ՝ ոչ թէ ժամանակաւորապէս իր վրայ առնելով մարմինը, այլ միանգամընդմիջտ միացաւ Սուրբ Կոյս Մարիամէն առած իր մարմինին, եւ այնուհետեւ ակ յափտենապէս անբաժանելի կը մնայ անկէ: Նոյն այդ մարմինով երկինք համբարձաւ եւ Հօրը աջ կողմը նստաւ, իր թագաւորութիւնը առնելով. եւ նոյն այդ մարմինով է որ վերստին պիտի գայ իր աստուածային փառքով, եւ նոյն այդ մարմինով է որ դատաստանի աթոռը պիտի նստի, դատելու համար ողջերն ու մեռեալները:

Ասիկա նախ կը շեշտէ Քրիստոսի անձին անփոփոխելի նոյնութիւնը, եւ մեր փրկութեան անփոփոխելի իրականութիւնը: Ասիկա կը շեշտէ նաեւ երկրորդ գալուստին տեսանելիութիւնը, թէ քրիստոս պիտի վերադառնայ երեւելի կերպարանքով, եւ տեսանելի պիտի ըլլայ բոլորին:

3. Եւ փառք Հօր:

«Հօրը փառքով» բացատրութիւնը երբեք չի նշանակեր թէ այդ փառքը յատուկ է Հօրը, բայց ոչ՝ Որդիին: Չի նշանակեր թէ միայն Հայրը ունի այդ փառքը, եւ ոչ՝ Որդին: «Ինչ որ Հայրս ունի՝ իմն է», կ'ըսէ Քրիստոս (Յի 16.15): Այդ փառքը յատուկ է աստուածային բնութեան, եւ ինչ որ յատուկ է աստուածութեան, յատուկ է հաւասարապէս Սուրբ Երրորդութեան բոլոր անձերուն: Հետեւաբար Հօրը փառքը խորքին մէջ նաեւ Որդիին փառքն է, ինչպէս նաեւ փառքն է Սուրբ Հոգիին:

Այստեղ այդ փառքը ինքն իր մէջ չէ՛ որ կը դիտուի, այլ՝ կապուած Քրիստոսի երկրորդ գալուստին, որ փառքով վերադարձը պիտի ըլլայ: Ներկայ ժամանակին մէջ, առաջին գալուստի օրերուն մարդիկ գայն տարբեր կերպով տեսան ու ճանչցան, առանց իր թագաւորական փառքին, որ կամաւորաբար մերկացած էր մեր փրկութիւնը իրագործելու համար: Բայց ապա իր փրկագործութեան պարգեւները մեզի բաշխելէ ետք ժամանակաւոր կերպով «Հեռաւոր երկիր» գնաց (Ղկ 19.12-27), իր թագաւորական փառքով վերադառնալու համար օր մը, եւ հիւսիս երկրորդ գալուստը վերադարձի այդ օրը պիտի ըլլայ, երբ անիկա իր աստուածային ամբողջ փառքով պիտի գայ, իրրեւ Փրկիչ (Եբր 9-28) եւ Դատաւոր (Յի 5.22-23: Գրծ 10.42):

4. Ի դատել զկենդանիս եւ զմեռեալս:

Աստուած է Դատաւորը բոլորին: Երբ կ'ըսենք «Աստուած», կը հասկնանք Սուրբ Երրորդութիւնը: Բայց դատաւորական գործը հաւասարապէս երեք անձերունը ճանչնալով հանդերձ, Հին եւ Նոր Կտակարաններէն գիտենք, թէ այդ պաշտօնը մասնաւորապէս կը վերաբերի Որդիին (Յի 5.22-23) .

- ա) Քրիստոս այդ պաշտօնը ունի՝ նախ իբրեւ արարիչ, որ իր պատկերով ստեղծեց մարդը, եւ գայն իշխան ու տնտես կարգեց աշխարհին:
- բ) Քրիստոս այդ պաշտօնը ունի իր մարդեղութեանը մէջ, իրրեւ հաղորդակից մարդկային մեր բնութեան:
- գ) Քրիստոս այդ պաշտօնը ունի մանաւանդ իբրեւ Փրկիչ, որովհետեւ իր արիւնով գնեց մարդը մեղքի եւ մահուան ծառայութենէն:
- դ) Քրիստոս այդ պաշտօնը ունի, դարձեալ, իբրեւ մահուանէ կեանքի անցած Մարդու Որդին, որ իր մահուամբ եւ յարութեամբ ձեռք բերաւ այդ դատաւորական իշխանութիւնը (Հո 14.9):

5. Որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան:

Աստուած, իբրեւ Տէրը եւ արարիչը տիեզերքին, ինքն է նաեւ անոր Թագաւորը: Եւ այս տիեզերական թագաւորութիւնը անդադար ներբողութեամբ իրականութիւն է Աստուածաշունչին մէջ, Ինքնին հասկնալի է, որ այդ թագաւորութիւնը Ամենասուրբ Երրորդութեանն է, հաւասարապէս Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին:

Բայց սկիզբէն իսկ Աստուած յայտնեց, թէ իր կամքն է՝ որ այդ երկնաւոր թագաւորութիւնը նաեւ իր արտայայտութիւնը գտնէ երկրի վրայ, այն սերունդին կեանքին մէջ, որ Աբրահամով իրեն կանչուած սերունդը պիտի ըլլար, իր սեփական ժողովուրդը, սուրբ ազգ մը, քահանաներու թագաւորութիւն մը (Ելք 19.5-6: Հմմտ Ա. Պտ 2.5,9: Յլտ 1.6, 5.10, 20.6):

Արդ, Աստուած բազմաթիւ անգամներ Աբրահամի այդ սերունդին տուաւ իր խոստումը, թէ իրենցմէ պիտի տայ թագաւոր մը, որուն թագաւորութիւնը յափտենական պիտի ըլլայ (Դն 2.44, 7.13-14): Այդ թագաւորութիւնը պիտի գար իր Օծեալին ձեռքով: Նոր Կտակարանը ցոյց կու տայ այս խոստումներուն կատարումը Քրիստոսով (Ղկ 1.32-33):

ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՅՑ ՀԱՒԱՍԱՄՔԻՆ
Զարեհ Արք. Ազնաւորեան
(Շարունակելի 10)

SEEKING GOD'S FACE: A PRAYER OF TRUST AND HOPE.

Psalm 27

The Lord is my light and my salvation; whom shall I fear?
The Lord is the stronghold of my life; of whom shall I be afraid?
One thing I ask of the Lord, this is what I seek:
that I may dwell in the house of the Lord
all the days of my life,
to gaze upon the beauty of the Lord
and to seek Him in His temple.
I believe that I shall look upon the goodness of the Lord
in the land of the living.
Wait for the Lord;
Be strong, and let your heart take courage;
wait for the Lord.
Amen.

THE BOOK OF ECCLESIASTES

WRITTEN: PROBABLY BETWEEN 450 AND 180BC

WHAT YOU NEED TO KNOW:

Ecclesiastes is considered a wisdom book, like Proverbs. Throughout the book, the writer wrestles with the meaning of life. The content is unusual and, while it can seem gloomy and downbeat, it puts human life into perspective in light of eternity. There is a lot of debate around who wrote it. Solomon is traditionally suggested as the author, but it was probably written long after his reign. One theory is that Ecclesiastes is a piece of royal fiction by a writer taking on the persona of a king.

WHY READ IT?

This book honestly addresses some big questions in a poetic way. Looking at life, death and purpose, the writer puts life in perspective while giving us words to say to God when everything feels hopeless. It can be seen as a book about the meaninglessness of life without God.

WE'RE NOT SURE WHEN
ECCLESIASTES WAS WRITTEN
BUT IT'S LIKELY TO HAVE BEEN
AFTER 450BC

THE LETTERS 2 PETER

WRITTEN: PROBABLY THE FIRST HALF OF THE SECOND CENTURY

WHAT YOU NEED TO KNOW:

This is the second letter said to have been written by Peter. In it, he writes to the church about how Jesus transforms lives, and he challenges his readers to be holy. The letter was written in response to some false teachings about the Christian faith. Some people were spreading the belief that salvation was fully experienced in this life, so there would be no eternal life, and there would be no second coming of Jesus. In this letter, the writer voices his concerns about this teaching and speaks against it.

WHY READ IT?

We live in a culture where everything is fast-paced and where we have access to pretty much anything we want, immediately. This letter reminds us that God's timing is different from ours – he is not part of our 'have it now' culture. Peter spurs us on to keep our eyes fixed on Jesus.

(AD70)

ROMANS DESTROY
JERUSALEM

(BEFORE AD100-120)

PETER WRITES 2nd
LETTER



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prélature Arménienne du Canada



514-856-1200
prelacy@armenianprelacy.ca
www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան
3401 Olivar Asselin Montréal, Quebec H4J 1L5